ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/9

ք. Երևան «26» հուլիսի 2019թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բագրատ Գինոյան Գարեգինի» ԱՁ-ն, ի դեմս Բ. Գինոյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նյութական արժեքների գնահատում ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **60 000 (վաթսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները և ցանկը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827	«Բագրատ Գինոյան Գարեգինի» ԱՁ ք. Մարտունի, Երևանյան փ., թիվ 42/39 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2476604006530000, ՀՎՀՀ 82063994
Գլխավոր քարտուղար՝	
---------- Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Բ. Գինոյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«26» հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/9 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	73432100-1	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հաշվեկշռում հաշվառված և հետագա շահագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների /համաձայն կից ցանկի/ շուկայական արժեքի գնահատման ծառայություններ	դրամ	60 000	1	ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, 4-րդ հարկ	մինչև 15.08.2019թ. ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3,
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Բագրատ Գինոյան Գարեգինի» ԱՁ
ք. Մարտունի, Երևանյան փ., թիվ 42/39
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2476604006530000,
ՀՎՀՀ 82063994

---------- Բ. Գինոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Ց Ա Ն Կ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հաշվեկշռում հաշվառված և հետագա շահագործման համար ոչ պիտանի հիմնական միջոցների շուկայական արժեքի գնահատման ծառայությունների «26» հուլիսի 2019թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/9 պայմանագրի տեխնիկական բնութագրի

N	Գույքային համար	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Գույքի ձեռքբերման ամսաթիվ	Չափի միավոր	Քանակը	Գին (դրամ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Մնացորդային արժեքը (դրամ)
1	363-0184	Համակարգիչ P4 2,8GHz, 915 Intel chipset, VGA on board 64MB, 800FSB, HDD 80GB SATA, RAM 512MB, FDD. CD-RW/DVD, keyboard, mouse	9/28/2007	հատ	1.00	229,400.00	229,400.00	-
2	355-0043	Համակարգիչ Sony	8/21/2007	հատ	1.00	868,900.00	868,900.00	-
3	724-0127	Մոնիտոր Dell 17" LCD	7/30/2008	հատ	1.00	92,500.00	92,500.00	-
4	363-1171	Անխափան սնուցման սարք UPS Power-Com BNT 800 AP	1/9/2012	հատ	1.00	23,146.00	23,146.00	-
5	363-1218	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	8/18/2012	հատ	1.00	18,531.00	18,531.00	-
6	363-0625	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
7	363-1169	Անխափան սնուցման սարք UPS Power-Com BNT 800 AP	1/9/2012	հատ	1.00	23,146.00	23,146.00	-
8	363-0535	Անխափան սնուցման սարք UPS E-pro 800 VA	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
9	355-0074	Անխափան սնուցման սարք UPS E-pro 600 VA	8/25/2008	հատ	1.00	15,500.00	15,500.00	-
10	355-0113	Անխափան սնուցման սարք UPS E-pro 800 VA	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
11	363-0051	Անխափան սնուցման սարք UPS E-pro 600 VA	10/1/2006	հատ	1.00	24,100.00	24,100.00	-
12	363-0113	Անխափան սնուցման սարք UPS 600 VA	1/1/2007	հատ	1.00	19,760.00	19,760.00	-
13	363-0225	Անխափան սնուցման սարք UPS 1200 VA	3/20/2008	հատ	1.00	35,000.00	35,000.00	-
14	363-0346	Անխափան սնուցման սարք UPS E-pro 600 VA	8/25/2008	հատ	1.00	15,500.00	15,500.00	-
15	363-0351	Անխափան սնուցման սարք UPS E-pro 600 VA	8/25/2008	հատ	1.00	15,500.00	15,500.00	-
16	363-0363	Անխափան սնուցման սարք UPS E-pro 600 VA	12/12/2008	հատ	1.00	15,500.00	15,500.00	-
17	363-0501	Անխափան սնուցման սարք UPS E-pro 800 VA	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
18	363-0570	Անխափան սնուցման սարք UPS E-pro 800 VA	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
19	363-0612	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
20	363-0615	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
21	363-0616	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
22	363-0633	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
23	363-0634	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
24	363-0636	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
25	363-0638	Անխափան սնուցման սարք UPS	7/7/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
26	363-0644	Անխափան սնուցման սարք UPS	8/18/2011	հատ	1.00	19,440.00	19,440.00	-
27	363-1212	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	8/18/2012	հատ	1.00	18,531.00	18,531.00	-

N	Գույքային համար	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Գույքի ձեռքբերման ամսաթիվ	Չափի միավոր	Քանակը	Գին (դրամ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Մնացորդային արժեքը (դրամ)
28	363-1213	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	8/18/2012	հատ	1.00	18,531.00	18,531.00	-
29	363-1215	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	8/18/2012	հատ	1.00	18,531.00	18,531.00	-
30	363-1225	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	8/18/2012	հատ	1.00	18,531.00	18,531.00	-
31	363-1226	Անխափան սնուցման սարք UPS POWER COM BNT600 AP	8/18/2012	հատ	1.00	18,531.00	18,531.00	-
32	724-0013	UPS 1500VA E-pro	7/28/2010	հատ	1.00	62,400.00	62,400.00	-
33	724-0014	UPS 600VA E-pro	1/1/2007	հատ	1.00	19,760.00	19,760.00	-
34	724-0015	UPS 600VA E-pro	1/1/2007	հատ	1.00	19,760.00	19,760.00	-
35	724-0016	UPS 600VA E-pro	1/1/2007	հատ	1.00	19,760.00	19,760.00	-
36	724-0018	UPS 800VA E-pro	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
37	724-0020	UPS 800VA E-pro	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
38	724-0021	UPS 800VA E-pro	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
39	724-0022	UPS 800VA E-pro	7/28/2010	հատ	1.00	27,600.00	27,600.00	-
40	724-0033	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
41	724-0034	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
42	724-0035	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
43	724-0036	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
44	724-0037	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
45	724-0038	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
46	724-0039	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
47	724-0040	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
48	724-0041	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
49	724-0042	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
50	724-0043	Անխափան սնուցման սարք 400BA Ippon Back office	11/25/2011	հատ	1.00	30,000.00	30,000.00	-
51	724-0044	Անխափան սնուցման սարք Power Com 600WAR	11/25/2011	հատ	1.00	21,400.00	21,400.00	-
52	724-0045	Անխափան սնուցման սարք Power Com 600WAR	11/25/2011	հատ	1.00	21,400.00	21,400.00	-
53	724-0046	Անխափան սնուցման սարք Power Com 600WAR	11/25/2011	հատ	1.00	21,400.00	21,400.00	-
54	ՓՀՄ-00084	Անխափան սնուցման սարք /աղբյուր/ UP650VA	x	հատ	5.00	15,582.00	77,910.00	-
55	363-0024	Տպիչ լազերային Canon LBP-3200	12/26/2005	հատ	1.00	124,200.00	124,200.00	-
56	363-0473	Տպիչ լազերային Canon MF 4018	7/19/2010	հատ	1.00	135,000.00	135,000.00	-
57	363-0475	Տպիչ լազերային Canon MF 4018	7/19/2010	հատ	1.00	135,000.00	135,000.00	-
58	363-0487	Տպիչ լազերային Canon MF 4018	7/19/2010	հատ	1.00	135,000.00	135,000.00	-
59	363-0639	Տպիչ լազերային HP LJ Pro P 1566	8/8/2011	հատ	1.00	120,000.00	120,000.00	-
60	363-0836	Սկաներ (լուսապատճենող սարք) HP Scanjet G3110	8/8/2011	հատ	1.00	70,000.00	70,000.00	-
61	363-0973	Գրասենյակային սեղան մեկ տեղանի առանց տումբայի	12/20/2007	հատ	1.00	20,000.00	20,000.00	-
62	363-0974	Գրասենյակային սեղան մեկ տեղանի առանց տումբայի	12/20/2007	հատ	1.00	20,000.00	20,000.00	-

N	Գույքային համար	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Գույքի ձեռքբերման ամսաթիվ	Չափի միավոր	Քանակը	Գին (դրամ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Մնացորդային արժեքը (դրամ)
63	ՓՀՄ-00064	Սեղան ամսագրերի համար	x	հատ	1.00	102.00	102.00	-
64	363-0916/3	Գրասենյակային սեղան (սև գույնի)	1/1/2003	հատ	1.00	100,000.00	100,000.00	-
65	363-0926	Տակդիր հեռախոսի	5/3/2004	հատ	1.00	32,400.00	32,400.00	-
66	724-0253	Սեղան 2 տումբանի	7/1/1996	հատ	1.00	46,100.00	46,100.00	-
67	724-0255	Սեղան Ղեկավարի	1/1/1998	հատ	1.00	8,000.00	8,000.00	-
68	ՓՀՄ-00063	Սեղան 1 գզրոցանի	x	հատ	3.00	263.00	789.00	-
69	ՓՀՄ-00086	Սեղան կցորդով	x	հատ	1.00	102.00	102.00	-
70	355-0248	Գրասենյակային բազկաթոռ պտտվող	12/25/2008	հատ	1.00	48,147.00	48,147.00	-
71	724-0188	Բազկաթոռ պտտվող	12/25/2008	հատ	1.00	48,149.00	48,149.00	-
72	ՓՀՄ-00088	Աթոռ փափուկ	x	հատ	6.00	198.00	1,188.00	-
73	ՓՀՄ-00089	Աթոռ լեհական	x	հատ	5.00	67.40	337.00	-
74	ՓՀՄ-00090	Աթոռ կիսափափուկ	x	հատ	3.00	47.00	141.00	-
75	ՓՀՄ-00091	Աթոռ աշխատանքային	x	հատ	2.00	30,000.00	60,000.00	-
76	ՓՀՄ-00093	Բազկաթոռ	x	հատ	5.00	117.00	585.00	-
77	ՓՀՄ-00095	Աթոռ երկաթյա ոտքերով	x	հատ	12.00	10,000.00	120,000.00	-
78	ՓՀՄ-00029	Հեռախոս Panasonic KX-T 2378	x	հատ	1.00	35,000.00	35,000.00	-
79	724-0009	Հեռախոս Ֆաքս Panasonic	12/7/2007	հատ	1.00	90,200.00	90,200.00	-
80	ՓՀՄ-00026	Հեռախոս Panasonic	x	հատ	2.00	4,750.00	9,500.00	-
81	ՓՀՄ-00027	Հեռախոս Panasonic	x	հատ	2.00	14,190.00	28,380.00	-
82	ՓՀՄ-00028	Հեռախոս Panasonic	x	հատ	3.00	18,900.00	56,700.00	-
83	ՓՀՄ-00071	Հեռախոսի ապարատ Panasonic	x	հատ	1.00	13,500.00	13,500.00	-
84	ՓՀՄ-00072	Հեռախոսի ապարատ	x	հատ	2.00	20,000.00	40,000.00	-
85	ՓՀՄ-00073	Հեռախոս	x	հատ	1.00	13,500.00	13,500.00	-
86	ՓՀՄ-00074	Հեռախոս	x	հատ	3.00	7,440.00	22,320.00	-
87	ՓՀՄ-00076	Ֆաքս և հեռախոս Panasonic KX-TG2511UAS	x	հատ	6.00	18,159.00	108,954.00	-
88	ՓՀՄ-00077	Հեռախոս Panasonic KX-TS2350UAB	x	հատ	3.00	6,900.00	20,700.00	-
89	724-0050	Սվիչ 16 Port	8/25/2011	հատ	1.00	27,000.00	27,000.00	-
90	724-0051	Սվիչ 24 Port	12/20/2008	հատ	1.00	200,000.00	200,000.00	-
91	724-0052	Սվիչ 24 Port	8/25/2011	հատ	1.00	39,000.00	39,000.00	-
92	ՓՀՄ-00081	Ցանցային բաժանարար	x	հատ	1.00	65,000.00	65,000.00	-
93	363-0707	Էլեկտրական թեյնիկ	12/27/2006	հատ	1.00	22,500.00	22,500.00	-
94	ՓՀՄ-00070	Թեյի պատրաստման էլեկտրական սարք	x	հատ	4.00	10,000.00	40,000.00	-
95	363-0663	Կոնդիցիոներ BK-1500	1/1/2003	հատ	1.00	6,807.00	6,807.00	-
96	363-0664	Կոնդիցիոներ BK-1500	1/1/2003	հատ	1.00	6,807.00	6,807.00	-
97	363-0665	Կոնդիցիոներ BK-1500	1/1/2003	հատ	1.00	6,807.00	6,807.00	-

N	Գույքային համար	Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Գույքի ձեռքբերման ամսաթիվ	Չափի միավոր	Քանակը	Գին (դրամ)	Սկզբնական արժեքը (դրամ)	Մնացորդային արժեքը (դրամ)
98	363-0666	Կոնդիցիոներ BK-1500	1/1/2003	հատ	1.00	6,807.00	6,807.00	-
99	363-0667	Կոնդիցիոներ BK-1500	1/1/2003	հատ	1.00	6,807.00	6,807.00	-
100	363-0668	Կոնդիցիոներ BK-1500	1/1/2003	հատ	1.00	6,807.00	6,807.00	-
101	363-0765	Ռադիատոր (տաքացուցիչ) ALONSA AL120/04	12/13/2007	հատ	1.00	38,950.00	38,950.00	-
102	ՓՀՄ-00079	Տաքացուցիչ փչող Timberk TFH S20QSS.G	x	հատ	3.00	7,700.00	23,100.00	-
103	ՓՀՄ-00080	Տաքացուցիչ Ardes AR4F02B	x	հատ	4.00	12,300.00	49,200.00	-
104	355-0004	Սառնարան ԶԻԼ	1/1/1996	հատ	1.00	393.00	393.00	393.00
105	363-0832	Ձայնագրիչ OLIMPUS WS-110	12/29/2008	հատ	1.00	47,500.00	47,500.00	-
106	ՓՀՄ-00082	Բարձրախոս՝ Speaker Creative A35	x	հատ	2.00	5,500.00	11,000.00	-
107	ՓՀՄ-00096	Կախիչ կանգնովի	x	հատ	1.00	20,000.00	20,000.00	-
108	ՓՀՄ-00087	Կարճապահարան	x	հատ	1.00	180.00	180.00	-
109	ՓՀՄ-00018	Կերամիկական աքսեսուար	x	հատ	1.00	10,000.00	10,000.00	-
110	724-0155	Հովացուցիչ, ծխատարում տեղադրվող AFWD -57700	6/16/2010	հատ	1.00	58,562.00	58,562.00	-
111	ՓՀՄ-00099	Շերտավարագույր	x	հատ	1.00	24,000.00	24,000.00	-
112	ՓՀՄ-00062	Պատի ժամացույց	x	հատ	1.00	5,000.00	5,000.00	-
113	ՓՀՄ-00062	Պատի ժամացույց	x	հատ	1.00	5,000.00	5,000.00	-
114	ՓՀՄ-00062	Պատի ժամացույց	x	հատ	1.00	5,000.00	5,000.00	-
115	ՓՀՄ-00062	Պատի ժամացույց	x	հատ	1.00	5,000.00	5,000.00	-
116	ՓՀՄ-00062	Պատի ժամացույց	x	հատ	2.00	5,000.00	10,000.00	-
117	ՓՀՄ-00097	Պատի ժամացույց	x	հատ	4.00	2,950.00	11,800.00	-
118	ՓՀՄ-00100	Սանդուղք, մետաղյա	x	հատ	1.00	18,000.00	18,000.00	-
119	ՓՀՄ-00078	Սեղանի լամպ	x	հատ	2.00	6,000.00	12,000.00	-

Հավելված N 2
«26» հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/9 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	73432100-1	Նյութական արժեքների գնահատում	-	-	-	-	-	-	60000	60000	60000	60000	60000	60000	**60000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3,
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011724, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Բագրատ Գինոյան Գարեգինի» ԱՁ
ք. Մարտունի, Երևանյան փ., թիվ 42/39
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2476604006530000,
ՀՎՀՀ 82063994

---------- Բ. Գինոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«26» հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/9 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«26» հուլիսի 2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-19/9 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն